ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Ապրիլի 6-ին, կիրակի.—Զատիկ: Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Օրը սովորականից տաք է ու ջերմացուցիչ: Առավոտյան ժամը 9-ից Մայր տաճարը և նրա ծառազարդ շրջակայքը լի է հավատացյալների հոծ բազմություններով, որոնք եկել են Հայաստանի, հարևան հանրապետությունների տարբեր վայրերից, ինչպես նաև՝ Լիբանանից, Ստամբուլից, Ավստրալիայից և այլ տեղերից՝ ներկա լինելու հայ եկեղեցու նվիրական տոնի հանդիսավոր արարողությանը, լսելու իր սիրելի Հայրապետի խոսքն ու պատգամները:

Օրվա պատարագիչն է **Վեհափառ Հայրապետը:**

Առավոտյան ժամը 11-ին Ն. Ս. Օծությունը Մայր Աթոռի ողջ միաբանության ուղեկցությամբ, եկեղեցական թափորով, զանգերի ղողանջի ու բազմահազար ժողովրդի խանդավառ բարեմաղթությունների ներքո, հանդիսավորությամբ Վեհարանից առաջնորդվում է Մայր տաճար՝ զատկական սուրբ պատարագ մատուցելու:

Մայր տաճարի աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավում արտասահմանի տարբեր երկրներից հայրենիք ուխտի եկած հավատացյալները, Գերագույն հոգևոր խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսները, վանքի պաշտոնեությունը և այլ անձինք:

Սկսվում է սուրբ պատարագը, որի երգեցողությունը կատարում է Մայր տաճարի երգեցիկ խումբը: Պատարագի հոգեթաթավ մեղեդիները յուրահատուկ հուզականություն են ներշնչում հավատացյալներին՝ մեծահամբավ երգչուհի Գոհար Գասպարյանի կատարմամբ:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը ս. Զատկի տոնի առթիվ հայ հավատացյալ ժողովրդին տալիս է հայրապետական Իր պատգամն ու հորդորը, որը նույն երեկոյան ժամը 11.30-ին ձայնասփիւռվում է Երևանի ռադիոկայանից:

Ս. պատարագի վերջում Ն. Ս. Օծությունը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարանի գահասրահ:

Մայր Աթոռի միաբանության և հյուրերի անունից Մայր տաճարի լուսարարապետ-տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը շնորհավորում է Վեհափառ Հայրապետի Զատիկը, բարեմաղթում Նրան երկար ու երջանիկ օրեր և հովվապետություն:

Այնուհետև խոսք է առնում Վեհափառ Հայրապետը, շնորհավորում է բովանդակ հայ ժողովրդի տոնը, օրհնում է մեր եկեղեցին ու ազգը, ցանկանում նրան բարօրություն, հայրենիքի բարգավաճում և աշխարհին խաղաղություն:

Ներկաները համբուրում են Վեհափառի աջը և շնորհավորում Նրա Զատիկը:

Զատկական հանդիսություններն ավարտվում են Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով: